ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-04 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2016թ-ի հոկտեմբերի 14-ին կնքված ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-04-43 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2016թ-ի դեկտեմբերի 05-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ : Պայմանագիրը կնքվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա: Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման համար նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն: տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի փոփոխություն՝ հաստատում նոր խմբագրությամբ, վճարման ժամանակացույցի հաստատում:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 4.1.1, 4.1.2, 7.1 և 7.3 կետեր

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի գնումների համակարգման բաժին:

Հեռախոս՝ 511 788, 511 787:

Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

14.10.2016թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՈՒՏՔԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N <<ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-04-43>> ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան 05 դեկտեմբերի 2016թ.

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Զաքարյանի որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից, միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 14.10.2016թ. կնքված N ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-04-43 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1, 4.1.2, 7.1 և 7.3 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը, Պայմանագրի 4.1.2 կետով նախատեսված Ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը.

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի N 1 հավելված հանդիսացող ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

1.2 Պայմանագիրը լրացնել N 1.1 հավելվածով և հաստատել Պայմանագրի N 1.1 հավելված հանդիսացող ՄՈՒՏՔԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 2-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 4 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը և հավելված N 2-ը հանդիսանում են N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ	***«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Ն. Տիգրանյան 27
Հ/Հ՝ 900011192052	ՀՎՀՀ՝ 00067177
ՀՎՀՀ՝ 02583241	Հ/Հ՝ 205002211337
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Ա. Զաքարյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
14.10.2016թ. կնքված N ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-04-43 պայմանագրի
05 դեկտեմբերի 2016թ. կնքված N 1 համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության անվանումը

Մուտքի հսկողության համակարգի վերանորոգման ծառայություններ /Այսուհետ՝ Սելեկտիվ անցումային համակարգի վերանորոգման ծառայություններ/:

1. Տեխնիկական պահանջները

Սելեկտիվ անցումային համակարգը պետք է լինի ավտոնոմ տարբերակով, որը հնարավորություն է տալիս համակարգին աշխատել նույնիսկ համակարգչի խափանման դեպքում: Համակարգչի խափանման ժամանակ ցանկացած գործողության մասին ինֆորմացիան պետք է արխիվացնել ավտոնոմ տարբերակով աշխատող սարքում և համակարգչի վերականգնման ժամանակ այդ ինֆորմացիան պարտադիր է թարմացնել՝ խուսափելով որևէ ինֆորմացիայի կորստից:

2. Սպասարկող կազմակերպության խնդիրները

Սելեկտիվ անցումային համակարգի անխափան աշխատանքի ապահովում, այդ թվում.

- Հսկման կետերի ավտոնոմ աշխատանք համակրգչի հետ կապի բացակայելու դեպքում և հետագայում համակարգչի միացնելուց հետո ինֆորմացիայի փոխանցում
- Կազմակերպության աշխատակիցների և այցելուների տվյալների առանձին մշակում
- Տարբեր աշխատանքային գրաֆիկների օգտագործում (այդ թվում բազմակի հերթափոխները)
- Միասնական տվյալների բազա գլխամասի և մասնաճյուղերի համար (նույնիսկ, եթե նրանք գտնվում են տարբեր քաղաքներում և տարածաշրջաններում), լոկալ համակարգչային ցանցի առկայության դեպքում:
- Շահագործման բազմակի թույլտվություն՝ գաղտնաբառերով, տարբեր թույլտվություններով և պարտականություններով:
- Աղյուսակների արտահանում /տպում/ Microsoft Excel-ի տեսքով:
- Շենքում տեղակայված բոլոր դռան անցումները ընգրկված են մեկ ընդանուր համակարգի մեջ:
- Համակարգը թույլ է տալիս աշխատակիցների մուտքերի և ելքերի հաշվառումն համակարչի միջոցով: հսկել աշխատակիցների մուտքերը և ելքերը դռան անցումների միջոցով: Համակարգը ներառում է ծրագրային ապահովում, ընդ որում՝ պարտադիր հայերեն լեզվով:

Առկա սելեկտիվ անցումային համակարգը պարունակում է հետևյալ սարքավորումները և անհրաժեշտության դեպքում փոխարինվող սարքավորումների քանակը, այդ թվում.

- Դռան անցում, (երկկողմանի)- 22հատ,

- AU -1 փոխարկիչ -3 հատ,
- Էլեկտրոմագնիսական փական -22 հատ, մինչև 180 կգ ձգման ուժով,
- Ինքնափակիչ համար 2 -22 հատ, դռան քաշը մինչև 80 կգ.,
- PSU անընդմեջ սնուցման աղբյուր և մարտկոց 12Վ 7Ա -22 հատ ցանցի լարման անջատման դեպքում աշխատանքային ռեժիմի ապահովում մինիմում մինչև 3 ժամ,
- Պրոքսիմիթի քարտերի ընթերցիչ -44 հատ, աշխատանքային հաճախականություն 125 kHz ապահովում է համակարգում գրանցված քարտերի մուտք և ելք,
- Ղեկավարման հսկիչ -22 հատ
- Համակարգում գրանցված քարտերի աշխատանքային ռեժիմի ապահովում և նոր քարտերի գրանցում,
- Մալուխ 4*0.22 -500 մ, որով միանում են համակարգի մեջ ընդգրկված բոլոր սարքավորումները,
- Մալուխ UTP-200 մ, համակարգի և համակարգչի կապի ապահովում,
- 2*0.75 -200 մ, համակարգի սնուցման ապահովում,
- Համակարգ-1 հատ,
- Մուտքային քարտեր /պրոքսիմիթի քարտեր/ - 200 հատ,
- Արգելափակոցի Genius կամ համարժեք ֆիրմայի ավտոմատացված համակարգ և ղեկավարման վահանակ:
- Հիմնական միջոց հանդիսացող պահեստամասերի, ինչպես նաև ծրագրային ապահովման համար երաշխիքային ժամկետ է սահմանվում՝ ներքոնշյալ համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 365 օր:

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը	Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 15 օրացուցային օրվա ընթացքում

Ծառայության մատուցման վայրը՝ քաղաք Երևան, Գարեգին Նժդեհի 23:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011192052
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական գանձարան

Ղեկավար Հ. Փոլադյան

/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ն. Տիգրանյան 27
ՀՎՀՀ՝ 00067177
Հ/Հ՝ 20500221337
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Հաքարյան

/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
14.10.2016թ. կնքված N **ԴԴ-ՇՀՇՁԲ-15/9-04-43** պայմանագրի N 1.1 հավելված
05 դեկտեմբերի 2016թ. կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՄՈՒՏՔԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում	
		դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	**Մուտքի հսկողության համակարգի վերանորոգման ծառայություններ** /Սելեկտիվ անցումային համակարգի վերանորոգման ծառայություններ/:	**4 994 400**	**4 994 400**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011192052
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Տնօրեն՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ն. Տիգրանյան 27
ՀՎՀՀ՝ 00067177
Հ/Հ՝ 205002211337
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Զաքարյան

/ստորագրություն/ Կ.Տ